ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 236-Ա

2019ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի մշակույթի 4239 հոդվածի /բաժին 8 խումբ 2 դաս 3/ նախատեսված գումարից 50.0 /հիսուն հազար / դրամ տեղափոխել ապարատի 4234 հոդված / բաժին1 խումբ 1 դաս 1/
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. Օգոստոսի 6
գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 237-Ա

Գ.ԲԱԼԱՀՈՎԻՏ ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 61 ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՇԵՆՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՈՒ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՌՆԵՐԸ, ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՆԱՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի III-րդ գլխի՝ որոշում եմ.

1. Բալահովիտ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գ.Բալահովիտ Լևոն Ավետիսյան փողոց թիվ 61 հասցեի հանրակացարանի շենքի (սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2630300 վկայական) ինքնակամ բացված ու ձևափոխված դռները, պատուհանները և ինքնակամ իրականացված միջնապատերի ձևափոխությունները ճանաչել օրինական՝ ըստ որոշման անբաժանելի մաս կազմող «Երիցուկ» ՍՊ ընկերության կողմից կազմված հատակագծի:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) ինքնակամ բացված և ձևափոխված դռները, պատուհանները և ինքնակամ իրականացված միջնապատերի ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը

2) կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ.օգոստոսի 7
գ.Բալահովիտ